ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԴԱՆԻԷԼ ԽԱՉԱՏՈՒՐՈՎ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Մեծարգոյ պրն. Խաչատուրով, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք Տիրախնամ թեմի առաքելութեանը բերած Ձեր գովելի աջակցութեան մասին: Ուրախութեամբ ենք անդրադառնում, որ ապրուածպարգեւ շնորհներով, տարիների ջանադիր աշխատանքով ձեռք բերած Ձեր յաջողութիւնները, Ռուսաստանի Դաշնութեան հասարակական կեանքում վաստակած արժանաւոր գործարարի բարի համբաւն ու կարողութիւնները Դուք ամենայն պատրաստակամութեամբ ծառայեցնում էք նաեւ ի շահ հարազատ ժողովրդի ազգային ու հոգեւոր կեանքի զօրացման: Հայրենասէր ոգով ու ազնիւ յանձնառութեամբ իրականացուող Ձեր ծրագրերի միջոցով Դուք կարեւոր մասնակցութիւն էք բերում Հայրենի մեր երկրի տնտեսութեան առաջընթացին եւ հայրենաբնակ Մեր զաւակների կեանքի բարօրութեանը: Փառք ենք մատուցում Բարձրեալին, որ մեր ժողովրդի զաւակները, հաւատարիմ մեր հայրերի աւանդներին, իրենց սրտից ծնուած ազնիւ յանձնառութիւններով բարի սերմեր են սերմանում ազգային մեր կեանքից ներս՝ առաւել լուսաւոր ու պայծառ դարձնելու համար մեր ներկան ու գալիքը:

Ձեր հաւատաւոր, ազգասէր ու եկեղեցասէր ոգու արտայայտութիւնն է նաեւ ի նպաստ Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցման կատարած մեծագումար ընծայաբերումը, որով Դուք Ձեր մասնակցութիւնը եւ բարի աւանդը բերեցիք ապրուածահաճոյ այս մեծ ու պանծալի նախաձեռնութեան իրականացմանը:

Բարձրօրէն գնահատելով Ձեր վաստակը մեր ժողովրդի, մեր Հայրենիքի եւ մեր Եկեղեցու կեանքում եւ սիրով ընդառաջ թեմակալ Առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ի Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ի Ս Ա Ի Ո Ր Ի Շ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ լինէք միշտ քաջառողջ, եռանդուն ու կորովաշատ եւ շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւնը բերել հաւատաւոր մեր ժողովրդին ու մեր Սուրբ Եկեղեցուն:

Թող Բարձրեալի օրհնութիւնն ու առատ շնորհները անպակաս լինեն Ձեր կեանքից եւ ընտանեկան Ձեր յարկից:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 778